Յովհաննիսի պատրիարքին. յայտնելով բարձր գերազանցութեանդ, զանտանելի նեղութիւն անձին իմոյ և զցաւ սրտիս, ամենախոնարհաբար խնդրեմ ցուցանել ինձ ծերոյնոյս զամենուրեք սփրեալ ողորմութիւն ձեր, և հրաման տալ ինձ գալ ի Թիֆլիզ առ ի հոգալ զպակասութիւնս և բժշկել ի տկարութենէ ոտիցս, որք յոյժ նեղեն զիս, վասն զի եւ ես համաձայն հրամանի պատրիարքին ոչ կամիմ գնալ ի սուրբ Էջմիածին, այլ կամիմ ըստ ողորմութեանն Ձերդ բարձր գերազանցութեանն բնակիլ այլ տեղ ուր կարող իցեմ, հանգստութեամբ անցուցանել զաւուրս կենաց իմոց. քանզի չիք իմ կարողութիւն ըստ հրամանի սրբազան պատրիարքին կատարել զաջորդութիւնն Շիրվանու, նախ վասն տկարութեան մարմնոյս և երկրորդ վասն չունելոյ ժողովրդեանն երկրիս զջերմեռանդութիւն առ հոգևորականս, որոյ ապացուցութիւն է այն, զի ի լրանալ հինգ ամաց չորս յաջորդ են փոխել, և թէ լաւ տեղ է ինչու չեն մնացել նոքայ, իսկ թէ վատ տեղ է, ես ինչպէս կարեմ տկար գոլով և ծեր կատարել զայն գործ. կարէք վերահասու լինել բարձր գերազանցութիւն Ձեր, եթէ արդեօք ես անցաւոր ոք էի, իսկ ընդէր կարացայ ծառայել սուրբ Էջմիածնա, 55 ամ առանց իվիք յանցանաց, որոց 25 ամ եպիսկոպոսութեամբ եմ ծառայել, և թէ որպէս հարազատութեամբ յայտնի է Սրբազնասուրբ պատրիարքին Եփրեմայ. տեսանելով զծառայութիւն իմ զիս Թիֆլիզու Հայոց յառաջնորդարանին օգնական կարգեց, և յայնմ ժամանակին որ ի 1827 թվ. խաչակիր զօրքն գնաց վասն պատերազմելոյ ընդ պարսից. նմանապէս ի ժամանակի խալորայ ցավին թէ ինչ ծառայութիւն եմ արել տէրութեան. յայտնի է Թիֆլիզեցոց, որոյ մասին հին կուսակալն կոզմանցս կնեազն Վարշաղու և կոմսն Երեւանու Պասկեւիչն յայտնեաց ինձ շնորհակալութիւն իւր. իսկ փոխանակ ըստանալոյ պարգեւ ինչ, արժանացայ ամենայն վիճակիս, առանց յանցանաց որ միայն ամենողորմած տէրութիւնդ իմ կարէ ազատել զիս ի չարչարանացս։

Եմ և մնամ սպասող ողորմութեան Ձերին բարձր գերազանցութեան

Եպիսկոպոս հայոց
ՍԻՄԷՈՆ ԲԶՆՈՒՆԵԱՆՑ

№ 2

ի 1835 թվ. մարտի 30
Ի վանս Սալիանու

Այս օրինակ երկրորդեցի և ուղարկեցի. յունսի 24ին. № 3։